մեա փոխի սկսուածք. Զար-
չարակցեալ.

Աշակ. Յամենայն ժամու աղաչանք
իմ.

Աւագ. Սուրբ սրաիւ. Եւ հապետին
երգ.

Աշակ. Տէր զօրութեանց. Տէր մի,
մատներ. Աղաչեսցուք. Սի-
րեցի փոխի սկսուածք.

Աւագ. Անկեալ աւաջի քո. Եարա-
կան հանգստեան. (յաւուրս
ուտեաց):

Աշակ. Ժամամու.

Աւագ. Ճաշու փոխ. Եարական.

Աշակ. Գիրք. (յաւուրս ուտեաց).

Աւագ. Աւետարան. Հաւատամք.

Աշակ. Եւ եւս հաւատով.

Աւագ. Տէր մեր եւ փրկիչ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳ՝

Աւագ. Խոնարհեցո փոխի սկսուածք:

Աշակ. Ապրեցո փոխի սկսուածք:

Աւագ. Լոյս զուարթ:

Աշակ. Եկեալքս ի մտանել արեգա-

կան:

Աշակ. Հասեալքս ի ժամ երեկոյիս.

Քարոզ. Հասեալքս ի ժամ.

աղօթքն:

Աւագ. Մեսեղիքի սկսուածք: Ուղիղ

եղիցին:

Աշակ. Ասացուք. կամ Ազաչեսցուք

կամ Մայր սուրբ:

Աւագ. Լուր հայնից. Ս. Աստուած.

վասն լսելի լինելոյ. Համ-

բարձի փոխի եւ Շարականի

սկսուածք:

Աշակ. Վասն խաղաղութեան. Հայր

գթած. Որ բնակեալն կամ

Աստօրհնեցէք. Եւ մեր միաբ.

Աւագ. Յոյս կենաց:

Աշակ. Յիշեա Տէր զպաշտօնեայս:

Խնդրեսցուք. կամ Ս. Խաչի Լու:

Քուճ ամենազօր. կամ Թա-

գաւոր կամ պահպանեա.

Գիրքն:

Աւագ. Աւետարան:

Աշակ. Ամբիծքի հանգստեան Շարա-

կան Սաղմոսն եւ Աւետարան:

Աւագ. Շարական Աստուածածնի.

Խաչի. Սաղմոսեւ Աւետարան:

Եւս Նախատօնակի Շարակա-

նաց սկսուածք:

Ձ. ԽԱՂԱՂԱԿԱՆԻ ԺԱՄԵՐ-

ԳՈՒԹԻՒՆ՝

Աւագ. Ի կարգուլքի մեւմ փոխի

սկսուածք. Շնորհեա մեզ.

Տէր.

Աշակ. Գոհացարութ. Տէր բարեւար

հոյեաց սիրով:

Աշակ. Աղաչեսցուք.
Առաջ. Ենորհատու բարեաց.
Աշակ. Երանեալ են ամբիժք. բաժնի
եւ Արարի իրաւունս փոխի
սկսուածք. Ի քէն հայցեմք.
Շարահան երկնաւոր հօտ ընտ-
րեալ. վասն հանդուցեալ.
Գրիստոս որդի.

Է. ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳ.

Առաջ. Առաքեա Տէր զԼԿՍ քո.
Աշակ. Եկեսցէ փոխի սկսուածք.
Աղաչեսցուք քարոզ.
Առաջ. Տէր Աստուած. Խաղաղու-
թեամբ յոյս. Աւետարան.
Աշակ. Ընկալ քաղցրութեամբ կամ
Ատտուած յաւիտենական կամ
Որդի Աստուծոյ.
Առաջ. Հաւատով խոստովանիմք ըս-
կսուածք.

Աշակ. Ս. ՂԱՍՏՈՒԹԱԾԻՆ.

Առաջ. Ընկալ Տէր. Փառք քեզ Տէր
Աստուած մեր (*).

(*) Թէ սկսուածքի եւ թէ արձակման Հայր
մեր աղօթքներն նոյն պէս եւ մաղթանքներն
վերաքերին երիցազոյն քահանային կամ թա՛մ
օրճնոգին:



Հ Ե Ր Ա Մ Ի

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

Ք Ր Ա Յ Ո Ւ Յ Ի

1 8 9 2 Ա Մ Ի



Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Տ Ե Ս Ո Ւ Ք Բ Ի Ն

Կ Ի Ի Ր Ա Վ Է Ե Ի Տ Օ Ն Օ Ր Ե Ր Ի Վ Է Ր Ե Տ

Յ Ի Ն Կ Է Ր

1 Գ Չ. Գ. Օ Ր Մ Ն Ն Դ Ե Մ Ա Ն Ա Տ Ո Յ:
Տ Ա Ր Ե Մ Ո Ւ Տ Ե Ի Կ Ա Ղ Ա Ն Դ:

Կաղանդ բառը լատիներէն կ...
10 բառիցն է ծագած, եւ կը նշա-
նակէ բարձրաձայն գոչել: Հռով-
մայեցւոց ժամանակ քրմապետի
պաշտօնեաներից մին միշտ կը հսկէր
լուսնի ծննդեան վերայ, եւ երբ

լուսինը կերեւնար, բարձրաձայն
կազդարարէր զոհարար քրմին, ա-
պա ժողովուրդը հաւաքուելով զոհ
կը մատուցանէր ամեն ամսամտին:

5 Կ Ի Լ Բ Ա Կ Է. Ճ Ր Ա. Գ Ա Ղ Ո Յ Տ:

Մովսէս մարգարէի յայտնու-
թեան մէջ կը պատուիրէ Աստուած
որ իւրաքանչիւր եօթնեկի վեց օ-
րուան մէջ զործեն, իսկ եօթներորդ
օրը՝ որ է Շաբաթ, սուրբ պահեն՝
ի յիշատակ վեցօրեայ արարչագոր-
ծութեանն Աստուծոյ, եւ եօթնե-
րորդ աւուր հանգչելոյն, եւ Մով-
սէսի յայտնութեանն սկսած, մին-
չեւ առաքելոց օրերը՝ այս պա-
տուիրանը կը պահէին երբայեցիք:
Իսկ առաքեալները՝ ի յիշատակ կե-
նարար յարութեան Քրիստոսի Տեա-
ռըն մերոյ, եւ ի յիշատակ շնոր-
հաց Հոգւոյն սրբոյ գալուտեան՝ շա-

բաժի աւուր հանդիսալը միաշաբա-
թի օրը փոխեցին, քանզի նոյն
օրը՝ յարուժիւն առաւ Տէրն մեր,
եւ նոյն օրը՝ իջաւ Հոգին սուրբ
առաքելոց վերայ, եւ այժուհե-
տեւ բոլոր քրիստոնեայ ազգերը
մինչեւ այսօր միաշաբաթի օրը
կանեն հանդիսալ:

Կիւրակէ՛ յունարէն բառէ, եւ
կը նշանակէ Տէրու հասկ:

6 ԲԶ՝ ՏՕՆ ԾՆՆԿԵԱՆ ԵՒ ՄԸ-
ԿԸՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ:

Յիսուսի ծնունդը եղաւ Հռով-
մայեցոց Օգոստոս կայսեր քամա-
նակ Բէթղէհէմից ղուրս մի այրի
մէջ: Աստուծոյ հրեշապահ հովիւ-
ներին երեւնալով աւետիք առաւ,
որոնք զտնելով Յիսուսին մտուրն

մէջ՝ երկրապաշտիւն տուին, յե-
տոյ հրեշտակների բազմութիւնը
երեւնալով սկսան երգել: Փառք Ի
քառուսեա Աստուծոյ:

Արեւելքից երեք միգեր ասա-
ղի աւաջնորդութեամբ Բէթղէ-
հէմ գալով, երկրապաշտին Յիսու-
սին եւ ոսկի, կնդրուի եւ զմուռս
ընծայեցին:

Յովսէփ հրեշտակի յայտնելով՝
Յիսուսին՝ Մարիամ մօր հետ Ե-
գիպտոս փախցրուց Հերովդէսի
սպանութենէն ազատելով: Եւբ
Հերովդէս մեռաւ. Յիսուս դար-
ձաւ Նազարէթ եւ իւր երեսներորդ
տարին լրանալուն պէս մկրտուեց
Յորդանան գետի մէջ Յովհաննէս
Մկրտչից:

Բոլոր քրիստոնեայ ազգաց ե-
կեղեցիք՝ Կնունդ եւ Մկրտութիւնը
ի միասին կը տօնէին մինչեւ չոր-
րորդ դարուն վերջերը, քայց հին-

դերորդ դարում բաժանեցին այս երկու տօները՝ Ծնունդը Գեկտեմ, 25-ին, իսկ Մկրտութիւնը Յունվարի 6-ին, որոյ պատճառը միայն էր՝ որ երուսաղէմի եկեղեցին՝ այս տօները հանդիսաւոր կերպով կատարէ թէ Բեթղեհէմում եւ թէ Յորդանանում, մինչդեռ թէ Ծընընդեան եւ թէ Մկրտութեան տօնը միասին կատարելով անկարելի կը լինէր եւ Բէթղեհէմում եւ Յորդանանում գտնուել: Իսկ Հայաստանեայց սուրբ եկեղեցին այս սուրբելական ավանդութիւնը կը պահէ անսփոփոխ մինչեւ այսօր, որուն կը վկայէ եւ Ղուկաս ավետարանիչը՝ թէ Յիսուս երեսուն տարեկան լինել սկսած էր մկրտութեան օրը, եւ ինքն Յիսուս եր ամաց իբրեւ երեսնից սկսեալ: Ղուկ. Գ. 23: Ըստ որում եւ ավարելական դարէն սկսած

Յունվարի 6-ին կը տօնէին թէ Ծընընդեան եւ թէ Մկրտութեան տօները:

Գ. ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

Բրիստոնէութեան հինգ տաղաւարներին՝ մեր նախնիք սուրբ գրքի հիման վերայ հաստատեցին յիշատակ ննջեցելոց, այն է՝ Ծընընդեան, Յարութեան, Այլակերպութեան, Վերափոխման եւ Խաչ Վերացի տօներումը, այս օրերում՝ ննջեցելոց յիշատակաւ պիտի մտաբերենք, թէ քրիստոնէի յաւիտենական կեանքը մեռելոց յարութիւնէն յետոյ է՝ հանդերձեալ աշխարհի մէջ, եւ թէ այն աշխարհի երջանիկ կենացը պիտի հասնինք միայն Աստուծոյ հաճոյիցն համեմատ ապրելով այս աշխարհի մէջ:

12. Կիր: Է. օր Ծննդ:

13. ԲՅ. Ը. օր Ծննդ. ՏՅՆ ԱՆՈՒ-
ԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵ-
ՐՈՅ ՅԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Յիսուս իւր ծննդեան ութե-
րորդ օրը թլլպատուեց եւ կոչուեց
Յիսուս, որ հնադանդելով օրինաց,
իւր անձի օրինակով սորվեցուց մեզ
հնադանդել աստուածային պա-
տուհրանաց, օրինաց եւ եկեղեցա-
կան կանոնաց:

Յիսուս իւր թլլպատուեամբ
հաստատեց առ հարսն եղած ա-
ւետեքը, եւ հաւատեց իւր Աբ-
րահամի զաւակ լինելը, որի զա-
ւակէն—Քրիստոսէն՝ պիտի օրհ-
նուէին ամեն անգիր:

Աստուած Աբրահամին սպտուկ-
րեց թլլպատուեալն իբրեւ նշան
իւր ուխտին, Աստուծոյ ուխտն

էր՝ որ Աբրահամին զաւակ
պիտի տար երկնքի աստղերի չափ,
եւ երկիր պիտի տար նորսն իշաւա-
կին. իսկ այս ուխտին նշան տու-
աւ Աստուած թլլպատուեալնը,
յանդիմանելով Աբրահամու այն
արարքը՝ որ Հագար աղախինը կին
առաւ եւ նորսնից զաւակ՝ ունե-
ցաւ:

Աբրահամու այս արարքը՝ Աս-
տուծոյ իձուին, եւ եղիցին երկուքն
ի մարմն մի՝ սահմանին հակա-
ռակ էր: Աբրահամ այս օրինա-
զանցութիւնը արաւ Սառայի տը-
կար խորհրդին հետեւելով: ըստ
որում՝ Աստուած յայտնել էր Աբ-
րահամին թէ՛ Կղիզաբար Գամաս-
կացին պիտի չժառանգէ զնա, այլ
նորսն զաւակն, եւ զի Սառա կա-
նանց օրէնքում լինելուց դարա-
րած էր, համարեցաւ թէ՛ Աբրա-
համին ծնունդ պիտի լինի, բայց

ոչ իրանից, վասն որոյ առաջադ-
կեց աղախինը կին առնուլ: Այլ
Աստուած իւր զօրութիւնը ցոյց
տուաւ Հարիւր տարեկան ծեր
Աբրահամին եւ իննսուն տարեկան
ամուլ Սառային զաւակ տալով:

Այսպէս թլպատութեան օրէնքը
այնպիսի մի պայման էր Աբրահա-
մին եւ նորա սերունդին, որով
յանձնառու եղան միակին ամուս-
նութեան Աստուածադիր օրէնքը
անխախտ պահպանել:

Առաքեալները՝ Գրիստոսի Տեա-
ռն մերոյ շնորհած վարդապե-
տութիւնը ուսուցանելուց յետոյ՝
աւելորդ համարեցին թլպատու-
թեան պայմանի կատարումը, ըստ
որում աւելի ազդու կերպով վար-
դապետեց Փրկիչը՝ միակին եւ ան-
բաժան ամուսնութեան օրէնքը եւ
Հաստատեց:

Իննդեան ութերորդ օրը կը

տօնենք իբրեւ տօն անուանակոչու-
թեան Փրկչին:

19 Կիր. Ա. զինի Ծննդ:

26 Կիր. Բ. զինի Ծննդ:

Փետրվար:

2 Կիր. Առաջ. Գ. զինի Ծննդ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորէջ՝ Վի-
րապէն դուրս գալուց յետոյ՝ Վա-
ղարշապատի պարիսպներէն դուրս
բարոզեց Հայոց Տրդատ Թագաւո-
րին, պալատականներին եւ բոլոր
խոնուած ժողովրդին, վաթսուն
եւ վեց օր շարունակ ուսուցա-
նելով Աստուածաշունչ կտակա-
բանաց պատուէրները եւ ճշմար-

տուժիւնը. եւ ապա տեսելը
պատմեց, եւ կաթուղիկէ Էջ-
միածնի տեղը որմովք փակե-
լուց յետոյ՝ մի եօթնեակ ծով
պահել տուաւ հարուածեալներին,
եւ ապա Աստուծոյ ընծայեց զնո-
սա սուրբ խաչի առջեւը երկրպա-
գեւ տալով. եւ թագաւորը, ու
ուրիշ հարուածեալները բժշկեցով:
Այս յիշատակաւը առաջաւորաց
կատուի այս կիւրակէն:

9 Կիր. Դ. զինի Գննու:

13 ԵՇ. ՏՕՆ Ս. Վ.Ա.Բ.Ս.ՆԱ.ՆՅ
զօրավարացն մերոց հազար ե-
րեսուն եւ վեց վկայիցն որք կա-
տարեցան ի մեծ պատերազմին:

Երբ Յազկերտ Բ. կամեցաւ
քրիստոնեաները մոզական տալան-

դին դարձնել Միհրնեոսեհ հաղա-
րապետի եւ մոզպետաց թելադը-
րու թեամբ. անմիջապէս հրաման
հանեց՝ որ բոլոր հպատակ քրիս-
տոնեայք մոզական աղանդը ըն-
դունին եւ կրակին երկրպագեն.
եւ իւր այս ջարու թեամբ՝ դործիք
դտաւ Վասակ եւ Վարադիւղան
(փեսայ Վասակի) Սիւնեաց հայ
նախարարները: Յազկերտ հրաւեր
կարգաց Հայոց, Վրաց, Աղուանից
եւ այլ քրիստոնէից զօրաց յա-
պարտաշարհ Յունաց դէմ՝ պա-
տերազմելու պատրուակաւ, որոնք
թէ եւ գիտէին Յազկերտի նեն-
գութիւնը, բայց որպէս զի չգըք-
գըռեն՝ յանձն առին նորա հրա-
մանը:

Յազկերտ հրամայեց որ քրիս-
տոնեաները բռնի մոզական ա-
ղանդին դարձնեն: Գեհնապուհ
ուն հարկահան ուղարկեց Հայաս-

190
տան խստութեամբ նեղելու հա-
յերին, որպէս զի զիջանեն իւր
կամքը կատարելու, բայց քրիս-
տոնեայք սիրով ամեն բան յանձն
առին եւ կրահապաշտութեան
դիմադրեցին: Ապա բացարձակ
հրովարտակով հրամայեց քրիստո-
նէութիւնը թողուլ, որին նախա-
րարները եւ եպիսկոպոսները պա-
տասխանեցին, մոռական աղանդը
արհամարհելով եւ քրիստոնէական
կրօնի ճշմարտութիւնը ջատագո-
ւելով: Յազկերտ զայրացած կոչեց
նախարարները, որոնք ուխտելով
անասան մնալ քրիստոնէական
ճշմարիտ հաւատքի մէջ, ար-
համարհեցին նորա հրամանը եւ
բանտարկուեցան:

Յազկերտ մտադիր էր յանդարձ
օտարութիւն վարել նորանց եւ
անթիւ զօրքով դիմել Հայաստանի
վերայ կրակապաշտութիւնը տա-

բաժելու մտօք, պալատականնե-
րից մին, որ ծածուկ քրիստոնեայ
էր՝ խորհուրդ տուաւ նախարար-
ներին առ երեսս ընդունել եւ վե-
րադառնալով աղատել թէ իրանց
եւ թէ հայրենիքը, որին հաւանե-
լով կատարեցին Յազկերտի կամքը,
առ երեսս երկրպագելով արեգա-
կան: Յազկերտ ուրախացաւ, մեծ
պատուով պարսկական զօրքերով
եւ եօթն հարիւր մոգերով դարձ-
րեց Հայաստան:

Երբ բանակը հասաւ Ծաղկոս
գաւառը Ահգո դիւղաքաղաքը եւ
մոգպետը կողէր եեեղեցւոյ դու-
ները քակել, Ղեւոնդ երեց եկե-
ղեցականաց եւ քրիստոնէից բազ-
մութեան հետ դիմադրեց եւ մեծ
հաջողութեամբ վանեց մոգերը եւ
զօրքերը:

Վարդան եւ ուխտեալ նախա-
րարները տեսնալով այս, յայտնե-

ցին Յովսէփի կաթուղիկոսին՝ իրենց
առ երեսս ուրացուցեան նպա-
տակը, եւ ուխտեցին անետարանի
վերայ երդուելով՝ պատերազմել
հաւասոյ համար, յարձակեցան
պարսից վերայ, յաղթեցին՝ եւ ե-
րեւելիները կալանաւորեցին, որոց
հետ եւ ի սրտէ ուրացեալ Վա-
սակին, որ կեղծաւորաբար եր-
դուելով Աւետարանի վերայ՝ ար-
ձակուեց:

Յագիկոտ կրկին զօրք ուղարկեց
Միհրնես հաղտրապետի առաջ-
նորդութեամբ, որ միգական ա-
ղանդը Հայաստան մտցնէ: Սա
ուխտանհեաք Վասակին դործը ու-
նելով կաշխատէր Հայոց միաբա-
նուծիւնը քակել, խոստանալով
նորան թագաւորացնել Հայոց վե-
րայ:

Վարդան եւ նախարարները
վախտուն եւ վեց հազար կամաւոր

զօրքով բանակեցան Տղմուտ գե-
տի ափը՝ Աւարայրի դաշտում՝
Պարսից զօրաց հանդէպ, եւ դի-
մադրելով՝ կոտորեցին երեք հա-
զար հինգ հարիւր քառասուն եւ
չորս անձինք եւ ինն զօրա-
կաններ, ուր եւ արին Վար-
դան իւր նիզակակիցներով նահա-
տակեցաւ, եւ ազատեց Հայաս-
տանը կրակապաշտուծիւնից:

Վարդանանց զօրավարաց պա-
տերազմը կը պատմէ Եղիշէ վար-
դապետ իւր առանձին դրքով:
որ պատերազմ վարդանանց կը
կոչուի, նոյնպէս եւ Ղազար Փար-
սիցին կը սլատմէ իւր Հայոց պատ-
մութեան մէջ:

14 Ուր. ՏԵԱՌՆ ԸՆԴԱՌԱՋ:

Երբ Յիսուսի ծննդեան քառաս-
ներորդ օրը լրացաւ, սուրբ կոյս

Մարիամ Յիսուս մանուկին տա-
րաւ տաճարը՝ որ Աստուծոյ ըն-
ծայէ, (հին օրինաց ժամանակ ա-
մին արու անդրանիկ քառասուն
օրից յետոյ կը տարուէր տաճարը
Աստուծոյ ընծայելու, որ յիշատակ
էր Աստուծոյ այն խնամոց՝ որ Ե-
գիպտոսի անդրանիկներին կոտորման
ժամանակ՝ Իսրայէլի անդրանիկ-
ները, կոտորիչ հրեշտակի կոտո-
րածէն ազատեց), Սիմէօն ծերու-
նին՝ որ հրաման առած էր սուրբ
Հոգւոց չը մեռնել մինչեւ տիրոջ
օծեալը — քրիստոսը տեսնել, տա-
ճարը գալով, գիրին առաւ Յիսուս
մանուկին, գոհացաւ յԱստուծոյ,
քարոզեց՝ որ ընծայուած մանուկը
հեթանոսաց ի հօրէ՛ լոյս՝ եւ Իս-
րայէլացւոց ըստ ուրիշ գրութեան
եւ օրինաց փառք պիտի լինի:

Երբ Յովսէփ ու Մարիամ վար-
մացած կեցած էին այս խօսքերի

վերայ, Սիմէօն ծերունին՝ խօսքը
դարձրեց Յիսուսի մայր Մարիա-
մին եւ ասաց, շատերը այս մա-
նուկի շնորհօք պիտի կանգնին
հաւատով, եւ շատերը անհաւա-
տութեան մէջ մնալով՝ մեղաց
խաւարի մէջ պիտի ծածկուին, եւ
այս ուրուր կրած չարհարանքը՝
սուր սլաքի նման սիրտը պիտի
խոցէ:

Յիսուսի աշխարհի փրկիչ լինե-
լը յայտնեց նաեւ 34 տարեկան
Աննա մարդարէտահին, որ իւր
կենաց օրերը տաճարում արօ-
թելով կանցունէր:

16 ԿԻՐ. ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԳԱՆ՝

Բարեկեցեալ կամ բարեկեն-
գանոչիչ մարդկային ընու-
թեանը յատուկ եւ վայելուչ խը-
րախոսութիւն կը նշանակէ, որ

ըստ յայտնութեան Աստուածա-
շունչ սուրբ դրոց այսպէս կարե-
ւի է բացատրել:

Աստուծոյ առաջին պատուի-
րանն է առ նախաստեղծն մարդ-
աճառասիկ ետոռ ձեզ զամենայն
իւրոս սերմանելի՛ սերմանել սերմն
ըստ արգի եւ ըստ նմանութեան,
որ ե ի վերայ ամեայն երկրի, եւ
ամենայն փայտ որ ունիցի յին-
քեան պտոշղ ուրման սերմանե-
լոյ՝ ձեզ շիցի ի կերակուշի. Ծննդ-
Ա. 29: Այս պատուէրով կը վճռ-
ուէ Աստուած, թէ անարատ եւ
կատարեալ մարդուն յատուկ կե-
տակուրը պիտի լինին ամեն սեր-
մանելի սերմերը, եւ ծառոց պը-
տուղները՝ որ իրենց մէջ սերմա-
նելի սերմն ունին, ըստ որում
այս պատուէրը տուաւ Աստուած
նախաստեղծ մարդուն՝ երբ դը-
րախտի եւ անստեղծեան վիճակի

մէջ էր, ինչ կատարելութեամբ՝ որ
ստեղծել էր Աստուած:

Մարդկային ընտելեան յատուկ
ուանելին սահմանող այս պատուէ-
րից լեռոյ՝ երբ Ագամ մեղանչեց,
Աստուած անիծեց նախաստեղծ
մարդուն երկրագործութիւնը, եւ
կերակրոց մասին վճռեց այսպէս,
եւ ց Ադամ ստե, . . . անիծեալ
շիցի երկիր ի գործս քո, տրամոշ-
քեամբ կերիցես զնա զամենայն
աշոշրս կենաց քոց, փոշ եւ տա-
տասկ թուստացե քեզ, եւ կերիցես
զբանջար վայրի. քրտամք ե-
րեսաց քոյ կերիցես զձաց քո. . .
Ծննդ. Գ. 17-19:

Այս պատուէրով կը վճռէ Աս-
տուած, թէ երկիրը՝ մեղաւոր
մարդու գործերի մէջ՝ փռշ եւ
տատասկ պիտի բուսուցանէ, եւ
մարդուն բնական կերակուրը՝ պա-
կաս պիտի դայ, եւ ստիպուի վայ-

րի բանջար եւս ուտել, Ծննդ.
Ա. 30: Ուրեմն բանջարները մար-
դուն յատուկ կերակուրը չեն, այլ
առ ի չդոյէ բուն կերակրոյն՝ տոն-
պուեցան ուտել:

Մարդկային ուտելիքի նկատ-
մամբ՝ երբորդ անգամ եւս կը
վճուէ Աստուած կայէնի նախանձն
անիծելով. եւ արգ ահիծեալ շի-
ցիր գու ի վերայ երկրի. . . . զի
ցործիցն զերկիր եւ ոյ յաշնչե
տալ բեզ զգօրոշբիւն իշր, երե-
րեալ եւ աստուեալ եղիցիս ի
վերայ երկրի. Ծննդ. Գ. 11, 12:

Աստուած՝ այս վճուով կանիծէ
երկիրը կայէնի գործերի մէջ, որ
իւր զօրութիւնը չցուցանէ, այսին-
քըն չկանաչեցնէ նորա սերմանա-
ծը, որով իսպառ քաղցած պիտի
մնայ կայէն՝ եւ սերմերէ եւ պը-
տուղներէ, եւ բանջարէ զրկուած,
եւ երերեալ տատանեալ ասդին

անգին պիտի գնայ դայ կերակուր
պնտուէ: կայէն եւ իւր սերունդը
այս դատապարտութեանը վիճա-
կուելով՝ գիշակեր եւ մնակեր ե-
ղան եւ մնակերութենէն յե-
տոյ ապականեցան, մինչեւ ջրն-
ջեց զնասա Աստուած ջրհեղեղով:

Մարդկային ուտելիքի վերաբեր-
մամբ՝ չորրորդ անգամ եւս վըճ-
ուեց Աստուած ջրհեղեղէն յետոյ՝
Նոյն եւ նորա որդւոցը պատուի-
րելով, եւ ամենայն զեռուս որ է
կենդանի մեզ շիցի ի կերակուր,
իբրեւ զբանջար խոտոյ ետաշ մեզ
զամենայն: Բայց զմիս արեամբ
չնշոյ մի՛ ուշտիցեք. Ծնն. Թ. 3, 4:

Այս պատուէրով կը վճուէ Աս-
տուած, որ մարդիկ՝ իրենց բուն
կերակրոյն—սերմերուն՝ եւ բան-
ջարներուն պակասած դիպուած-
ների մէջ միտ եւս ուտեն, բայց
առանց արեան, չհետեւել կայէնի

սերնդոց օրինակին՝ որ արիւնա-
խառն կուտէին, իբրև զբանջար
խոտոյ ետու ճեզ գունեակոյն՝ խօս-
քը այն միտքը ունի, թէ կնչպէս
որ սերմերը սրակասած դէպքում
բանջարները կերան, նոյնպէս ե-
թէ եւ բանջարները սրակասին,
ուտեն անարիւն միս:

Աստուածային յայտնութեանց
այս սլառգամներէն կը հետեւի.
Թէ կատարեալ եւ անարատ մար-
դուն բուն կերակուրն է սերմն եւ
պտուղ. վայրի բանջարը երկրոր-
դական կերակուր է, բուն կերա-
կրոյն սրակասած դէպքում. իսկ
անարիւն միսը՝ երրորդական կե-
րակուր է եւ բանջարի միանգա-
մայն սրակասած դէպքում:

Քրիստոնէութեան նախնի դա-
րերում՝ այս սլառախրանաց ներ-
քին բարոյականը պահելու ջանքն
ուժգին էր. եւ աստուածածանօ-

թուլթեան նուիրուած օրերումն՝
բուն կերակուրը միայն կը ճաշա-
կէին, իբրեւ թէ անարատ եւ ան-
մեղ մարդկութեան վերձակումը
սնանել կցանկանային. այսպիսի
օրերը պահոց օրեր կասուին շայ-
ատանեայց եկեղեցում:

Բուն բարեկենդան կասուի մե-
ծի պահոց նախընթաց կիւրակէն,
ըստ որում առաջին եւ մեծ պահ-
քըն կողջունէ ըստ քրիստոնէա-
կան եկեղեցւոյ:

* * *

23 Կիր. Բ. քառամորդական պահ:

* * *

Մայիս.

I Կիր. Գ. քառամորդական պահ.
Անաստիկն, Ղուկ. ԺԵ. I:

* * *

190

8 Կիր. Գ. քառամսորականն պհ.
Տեւեպիկ. Ղուկ. ժԶ. 1.

15 Կիր. Ե. քառաս. պհ. Գառու-
շորիկ. Ղուկ. ժԷ. 20: ժԸ. 14:

21 Շք. ՏՅՆ ՉԱՐՉԼԻՄՆԱՅ ԵՒ
ՄՏԱՆԵԼՈՅՆ Ի ՎԻՄՊՆ Ս.
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՍԱՍԻՈՐՉԻՆ ՄԵ-
ՐՈՅ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Ա-
նակ նախարարի որդին. ծնեց
257 թ. Վաղարշապատ քաղա-
քում՝ եւ կտորովի կատարածից
ազատուելով Կեսարիա տարուե-
ցաւ եւ մկրտուեց. ամուսնացաւ եւ
ունեցաւ Վրթանէս եւ Աբիսաա-
կէս որդիքը: Արեք տարուց յետոյ
գնաց Կասրովի որդի Տրդատին
ծառայելու:

Տրդատ արքայական փառօք Հը-
ռովկից Հայաստան դարձած միջոց
Եկեղեցաց դաւառի Երիզա աւա-
նում Գրիգորին հրամայեց, որ Ա-
նահիտ կուռքին ծաղիկաց պսակ
մատուցանէ. բայց Գրիգոր հրա-
ժարելով յայտնեց իւր քրիստո-
նէութիւնը: Տրդատ զպրտացաւ եւ
Հատ ջարջարանքների մասնեց, եւ
սպա Արտաշատ քաղաքի մահա-
պարտների կարմիրասի մէջ ձգեց:

22 Կիր. Զ. քառամսորականն պհ.
Գալսեական: Մատ. ԻԻ. 34:
ԻԳ. 39:

29 Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԳ:

Յիսուս Բեթիաղէ գիւղից Ա-
րուսաղէմ գնաց զատկի տօնի
պատճառով. Կրուսաղէմի մէջ հա-

Լարուած ժողովուրդը՝ Լուրով Յիսուսի դպրուստը. արմաւենեաց եւ ձիթենեաց ձիւղեր առած ընդ առաջ ելան ասելով. ովսաննա, որ ցաս յանսն Տեառն, քաղաքոր խրայեչի, խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս:

Ժողովրդից ոմանք իրանց հանդերձները կը տարածէին ճանապարհի վերայ՝ եւ ոմանք ծառերի ձիւղեր կը սփռէին Յիսուս թագաւորի առաջ: Յիսուս Երուսաղէտին մտենալով ասաց, Երուսաղէ՛մ, բէ գոհե այժմ գիտեալիք քո խաղաղութիւնը, եւ արտասուեց. մտաւ տաճարը Աստուծոյ տան վրէժխնդրութեամբ ւրցուած՝ արտաքսեց վաճառողները, գնողները եւ լրմայափոխները եւ շատ բժշկութիւններ արտա: Քահանայապետները եւ դպիրները տեսնալով այս ամենը եւ մանուկների օրհ-

նութիւնը՝ բարկացան ասելով, չէսլսիր թէ ինչ կասեն դուք, Յիսուս պատանխանեց, մանուկների բարանով պիտի կատարուի օրհնութիւնը: Երեկոյեան Յիսուս գնաց Բեթանիա դիւղը եւ ճանապարհին անապտուղ թղենին չորացուց, որ օրինակ էր առաքինութիւնից զուրկ փարիսեցուց:

* *

Ապրիլ

2 Ա.Ա.Գ Հ.Ն.Գ.ՇԱ.ԲԱ.Թ:

Հրէից Նիսան ամսոյ 14-ին՝ Բաղարջակերաց տօնի օրը՝ Յիսուս կամենալով զատիկը տօնել, Պետրոսին եւ Յովհաննէսին ուղարկեց Երուսաղէմ՝ որ զատկական գառը պատրաստեն: Յիսուս երեկոյեան Երուսաղէմ գնալով աշակերտաց հետ սեղան բազմեց, ընթրիքից

յետոյ լուսաց նոցա ստները՝ սրա-
տուիրելով իւր խոնարհութեան
օրինակին հետեւել:

Յետոյ կրկին բազմեց սեղան՝
հաղորդութեան սուրբ խորհուրդը
աւանդելու, առաւ բազարջ հացը,
օրհնեց եւ տալով աշակերտներին
ասաց, առէք կերէք այս ե մար-
մրն իւր, յետոյ անասակ գինին
առնելով՝ օրհնեց, գոհացաւ եւ
ասաց, արբէք ի սմակե սուկե-
քեան այս ե արիւն իմ նորոյ ոշի-
տի, ապա խորհրդական սեղանից
յետոյ՝ գնաց Ջիթենեաց լեռնը
աշակերտաց հետ:

*
*
*

5 Կիր. ԶԱՏԻԿ:

Հաջաթ երեկոյեան, լցս կիւ-
րակէ՝ Յիսուս յարութիւն առած
գուրս եկած էր գերեզմանից:
Իւղաբեր կանայք՝ որ եկան Յի-

սուսի մարմինը օծելու, նոյն ժա-
մանակ սաստիկ երկրաշարժ եղաւ,
վանս զի Աստուծոյ հրեշտակը ի-
ջաւ երկնքէն գերեզմանի քարը
մի կողմ գլորեց եւ վրան նստեց,
որի ահաւոր կերպարանքից պա-
հասպանները կիսամեռ ընկան: Ա-
ստուծոյ հրեշտակը քաջաւերեց իւ-
ղաբեր կանանց եւ աւետեց նոցա՝
թէ, գիտե՛մ զի զՅիսուս զխալէրեալն
իւրդրէք, յէ աստ, քահգի յարեաւ
որոյես ասացն. Մատ. Ի՛վ. 5, 6:

Իւղաբեր կանանց մի խումբ եւս
անուշահոտ իւղեր սուած կիւրա-
կէ արշալուսին գնացին գերեզման՝
որ փրկչի մարմինը օծեն: Երբ
տեսան գերեզմանի կափարիչ քա-
րը մի կողմ ձգած. Մարիամ
Մագդաղենացին ներս մտաւ, եւ
գերեզմանը դատարկ տեսնելով
վերադարձաւ քաղաք պատմելու
աշակերտներին. իսկ միւս կանայք՝

որ շփոթուած կային այս դէպքի վերայ, յանկաճ տեսան երկու լուսաւոր հրեշտակներ, որոնք աւետեցին Յիսուսի յարութիւնը եւ պատուիրեցին՝ որ զնան պատմեն աշակերտներին:

Պետրոս եւ Յովհաննէս յարութեան լուրը լսելով՝ գերեզման զնացին, եւ միայն պատանը տեսնելով վերադարձան: Մագթաղենացին կրկին գերեզման եկաւ, տեսաւ երկու հրեշտակ, եւ Յիսուսին պարտիզպանի կերպարանքով որին հարցուց թէ՛ նա՛ է Փրկիչ մարմինը վերցրել: Յիսուս անմիջապէս ծանօթ ութիւն տուաւ: Մարիամ իմանալով որ Յիսուսն է՝ ուղեց յառաջ զնալ: քայց Յիսուս արգելեց եւ պատուէր տուաւ որ շուտով զնայ յայտնէ աշակերտներին իւր յարութեան լուրը:

Յետոյ Յիսուս յայտնուեց քա-

ղաք վերադարձող իւղաբեր կանանց, քաջալերեց նորանց եւ պատուիրեց, որ ասեն աշակերտներին, զնան Գալիլեա եւ իրեն այնտեղ տեսնեն:

Իսկ գերեզմանի պահապան զինուորներից ոմանք երկիւղից քաղաք փախան եւ յարութեան բոլոր անցքերը պատմեցին:

* * *

6 ԲՉ. Բ. օր զատիկ:

ՅԻՇՍԱՍԿ ՄԵՌԵԼՈՅ:

* * *

7 ԳՉ. Գ. օր զատիկ:

ԱԻԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Գաբրիէլ հրեշտակը Նազարէթ քաղաքում տուրք կոյս Մարիամին ողջոյն տուեց ասելով՝ որդի պիտի ծնես եւ նորա անունը Յիսուս պի-

տի կոչես, նա մեծ սխտի լինի, եւ
բրդի բարձրելոյ պիտի կոչուի:
Մարիամ՝ իւր կուսական ծննդեան
անկարելիութեան վերայ ստարա-
կուսեց, բայց հրեշտակը քաջալե-
քեց ասելով, Հոգին ստարք եկեացե
ի քեզ եւ զօրոշրիւն բարձրելոյն
հովանի լիցի ի վերայ քո, զի որ
ձեռնեկոյն ե ի քե՛ն՝ ստարք ե եւ
որդի Աստուծոյ կոչեսցի. նաեւ
յայտնեց Եղիսաբէթի յղութիւնը
ասելով, որ Աստուծոյ մօտ անկա-
րելի բան չկայ: Մարիամ Աստու-
ծոյ կամաց առջեւ խոնարհելով
պատրաստականութիւն յայտնեց
եւ յղացաւ:

Ապա Մարիամ գնաց իւր ազ-
գական Եղիսաբէթին այցելութեան,
երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը
լսեց՝ մանուկը որովայնի մէջ խա-
ղաց, դարձաւ ասաց Մարիամին,
Օրհնեալ ես դու ի կանայս եւ

օրհնեալ է պատշաճ որովայնի քո,
աշտի իցե ինձ այս, զի եկեսցե
մայր տեսուն ըմոյ առիս, իրրեւ
եղեւ ձայն ողջունի քո յականջս,
խաղաց ցեծալով մանուկս յորո-
վայնի իմո՛ւմ. յետոյ Մարիամն
ասաց, մեծացուցե անձն իմ
գտեր եւ ցեծացե հոգի իմ Աս-
տուծոյ փրկիտ իմով, եւ երեք
ամսից յետոյ՝ Յովհաննէսի ծննդից
առաջ՝ վերադարձաւ Նազարէթ:

* *
*

12 ՆՈՐ ԿԻՐԱԿԷ (Կրկնագատիկ):

Նոր Կիւրակէ կատուի այն պատ-
ճառաւ՝ որ առաքեալները՝ երբ
խորհեցան եւ վճռեցին, որ Մով-
սիական օրինաց պատուիրած Շա-
բաթի սուրբ պահելը Կիւրակէի
փոխեն եւ նորա հետ միանգամայն
Յիսուսի յարութեան յիշատակը
տեսնեն, այս փոփոխութիւնը կա-

տարելու ժամանակ առաջին կիւ-
րակէն՝ զատիկ հետեւորդ կիւրա-
կէն է. զի այսօր փրկիչը կրկին
անդամ հանդիսաւոր կերպով
երեւեցաւ առաքելոց եւ իւր յա-
րութեան համբաւը հաստատեց՝
ցոյց տալով Թովմային՝ իւր մտրո-
նոյ վերքերը:

Նոր կիւրակէ կասուի, իբրեւ
թէ նոր շաքաթի կամ նոր ուխ-
տի շաքաթ ասէին:

* *
*

19 ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՒՐԱԿԷ

(Կաճալ Կիւրակէ):

Ըստ որում զատիկը ընդհանրա-
պէս գարնանամտի օրերումը կը
պատահի, միջերկրական երկիրնե-
րում: այս կիւրակէին՝ արդէն եր-
կիրը ամբողջապէս կանաչած կը

202

լինի եւ նոյն երկրացիք սովորու-
թեամբ այսպէս կանուանեն:

Իսկ աշխարհամատրան կամ աշ-
խարհամատուռն կասուի, ըստ ա-
ւանդութեան՝ Սիժն վերնատունը,
զոր առաքեալք եկեղեցի հաստա-
տեցին, ուր հաւատացեալք կը ժո-
ղովէին աղօթելու, որուն կը վկայե-
տուրք կիւրեղ կրուսաղէմոյ հայ-
րապետը իւր կոչումն ընծայու-
թեան գրքի մէջ, (Ժ. Գ. 37). ո-
րոյ յիշատակը այնուհետեւ եկե-
ղեցին տօնել սահմանեց:

* *
*

26 ԿԻՒՐԱԿԷ (Կարմիր Կիւրակէ):

Կարմիր կիւրակէ կասուի ըստ
որում երկրի կանաչութիւնը՝ ծա-
ղիկներով, եւ վարդազոյն ծաղիկ-
ներով պրտկուած կը լինի:

* *
*

3 Կիր. ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԵՍՁԻ:

Երեք հարիւր յիսուսն եւ մէկ թու-
ւին Գողգոթա լեռան վերայ Քրիս-
տոսի սուրբ խաչը լուսեղէն ճառա-
գայթաձեւ երեւեցաւ, որի լուսաւոր
ճառագայթները Գողգոթայից մին-
չեւ Ձիթենեաց լեռը կը տարա-
ծուէին: Այս սքանչելիքի վերայ
բազմաթիւ մարդիկ քրիստոնէա-
կան հաւատը ընդունեցին եւ Ե-
րուսաղէմայ սուրբ Կիւրեղ պատ-
րիարքի ձեռօք մկրտուեցան:

Ս. Կիւրեղ այս հրաշալի երե-
ւումը գրեց Կոստանդ կայսեր-
այնուհետեւ եկեղեցին սկսեց առ-
նել:

14 Եւ. խ. օր յինանց.

ՀՍՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Յիսուս յարութիւնից յետոյ ա-
ռաջին անգամ երեւեցաւ Կղէով-
պոսին: որոնք Էմմաւոս գիւղը
կերթ այլն, գնաց նոցա հետ Էմմա-
ւոս, սեղան նստեց. օրհնեց հացը,
տուաւ նորանց՝ եւ երբ ճանաչե-
ցին աներեւութացաւ:

Երկրորդ անգամ՝ երեւեցաւ
վերմաստն մէջ. ողջուն տուեց,
փարատեց նոցա կրակածը իւր յա-
րութեան մասին, ցոյց տալով ձեռ-
ները եւ ոտները, յետոյ վիջեց նո-
ցա վերայ ասելով. առէք շոգիւն
սուրբ:

Երրորդ անգամ ութ օրից յետոյ,
եզր աշակերտները հրէից երկիւղեց

գլխերը փակ տան մէջ ժողովուած
էին, երեւեցաւ նորանց: ողջոյն
տուեց, եւ Սովինսոյն ասաց, շո-
շափիր վերքերս եւ հաւատա,
Երանի և որակց բրոնք: Կտես՞ կը
և աշատան:

Չորրորդ անգամ՝ երեւեցաւ
Տիբերիայի ծովակի մօտ աշակեր-
տաց ձուկ որսալու ժամանակ, ուր
Յովհաննէս ճանաչելով եւ ուրա-
խանալով ասաց տերի է, յետոյ քա-
ռաններորդ օրը՝ հսնեց աշակերտ-
ներին Չիթենեաց լեռան վերայ,
տուաւ նորանց քարոզելու եւ
մկրտելու իշխանութիւնը՝ Հօց,
Արդւոյ եւ Հոգւոյն սրբոյ սնու-
նով խոստացաւ ուղարկել զօրա-
ցուցիչ Ս. Հոգին, ապա ձեռները
բարձրացրուց, օրհնեց, երկինք
բարձրացաւ եւ լուսաւոր ամպի
մէջ ծածկուեց: Ապա, առաքեալ-
ները դարձան Երուսաղէմի վեր-

նատուներ, եւ կը սորսաէին. Հօր ա-
ւետիքին, Հոգւոյն սրբոյ գալըս-
տեան, ինչպէս որ սրատուիրել էր
Յիսուս, եւ նոյն օրերուս՝ Յուդայի
տեղը վիճակաւ ընտրեցին զՄա-
տաթիա, որ երկոտասան առաքե-
լոց կարգն անցաւ:

* *

17 Կ/Ր. ԵՐԿՐՈՐԳ. ԵՍ.Ղ.ԿԱ.ԶԱ.ՐԳ.:

Յիսուսի համբարձուովոյ յետոյ,
սուրբ եկեղեցին այս օրոնը հրեշ-
տակաց հետ կը տօնախմբէ, որով-
հետեւ երկրաւորները Յիսուսի
գալուստը ճանաչեցին երկնաւոր-
ներից, ձեռք ձեռք այսօր փրկի, որ
է օժեւոյ տեր ի քաղաքի Գառքի:
Իսկ հրեշտակները ճանաչեցին
շատ տեղեր՝ Յիսուսի աստուածու-
թիւնը, քրիստոնէութեան տարա-
ծելով եւ եկեղեցիների հաստա-
տելով ըստ Պօղոսի, զի յայտնե-

ցի արդ իշխանոչբեանց եւ պե-
տոչբեանց, որ յերկինս են, ի ձեռե
եկեղեցոյ բազմապատիկ իմաս-
տոչբիւնն Աստուծոյ. Եփես. Գ.

10:

Հրեշտակները ինն դաս են եւ
երեք դասակարգութիւններ, Ա.
դասակարգութիւն կասուին ա-
թուք, սերովբէք եւ քերովբէք:
Բ. դասակարգութիւնն՝ իշխանու-
թիւնք, պետութիւնք, եւ զօրու-
թիւնք. Գ. դասակարգութիւնն
տէրութիւնք, հրեշտակապետք եւ
հրեշտակք: Այսպէս եւ եկեղեցին
ունի իւր դասակարգութիւնք, Կա-
թողիկոս, եպիսկոպոս, երեց,
սարկաւազ, կիսասարկաւազ, դը-
րակարդաց, սաղմոսասաց, դպիր,
եւ ժողովուրդ. ինչպէս Յիսուսի
դպատեան ժամանակ յաշխարհ
մեղ հետ տօնեցին հրեշտակները
երկրի վերայ, նոյնպէս եւ մէնք

Քրիստոսի յերկինս համբառնալու
միջոց. տօնակից կը լինինք հը-
րեշտակաց, մեր օրհներգը խառ-
նելով հրեշտակաց օրհնութեանց
հետ:

24 Կիւրակէ Ժ. օր յինանց.

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ:

Աւարեալները իրկցի խառ-
ման համաձայն՝ վերնատան մէջ
Աստուածածնի եւ հարիւր քսանի
չափ հաւատացեցոց հետ սպա-
սելով սուրբ Հոգւոյ դալստեան
էը հսկէին եւ կաղօթէին:

Համբարձման ասաներորդ օրը
սաստիկ հողմոց հնչմամբ, ձայն
լուսեց, լցուեց տունը եւ հրեղէն
լեզուների բաժանուելով ամենի
վերայ հանդեաւ, սրով սկսեցին
ձայլ եւ այլ լեզուներով խօսել:

208

Այս սքանչելեաց լուրը սարածուեց Երուսաղէմի մէջ, բազմութիւնը դիմեց առաքելոց ժողովարանը, դարմացան՝ եւ նոյն օրը երեք հազար հոգի ի Քրիստոս հաւատացին:

* *

31 ԿԵՐ. Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ:

* *

Յո-նիս:

6 ՇՔ. ԵՒՆ Ի ՎԻՐԱՊԷՆ ՍԸՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՆՈՐՁԻՆ, ՄԵՐՈՅ:

Յուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ տան եւ չորս տարուց աւելի Արտաշատի օձաւից Խորվիրապի մէջ մնալուց յետոյ՝ երեք հարիւր եւ մէկ թուին. Տրդատայ քոյր Խորովիւրապին երեւցած

տեսիլքներովն յայտնի եղաւ, թէ Գրիգոր կենդանի է, եւ Ստանաբարի ձեռօք Վաղարշապատ բերուելով բժշկեց խելայեղ Տրդատին, եւ նորա հետ հարուածեալներին:

Ս. Գրիգոր թաղեց սուրբ Հովիտիմեանց մարմինները, կանգնեցնելով նոցա վերայ վիպարաններ եւ նոցա հնձանի մէջ վաթսուն եւ վեց օր նստելով քարոզեց աւետարանը, տեսաւ ի տեսլեան՝ չօր Աստուծոյ միածնի իջումը Վաղարշապատի մէջ, եւ իջման տեղը շրջապատեց եւ Քրիստոսի սուրբ խաչը կանգնեց: Տրդատ ժողովով ընտրեց Ս. Գրիգորին Հայաստանի հովիւ, որ դնաց Կեսարիա, ձեռնադրուեց Ս. Թադէոսի յաջորդ Ղեւոնդիոս պատրիարքից, Հայոց աշխարհի վերայ Քահանայապետ:

Գարձաւ Տարօն (Մռշ), կործա-

210
նեց Գիտարեայ, Գիտանեայ, Վա-
հագնի, Անահտայ, Ատողիան ար-
ձանները եւ տեղը շինեց եկեղե-
ցիք, բազմաթիւ անձինք մկրտեց,
եւ ի պատիւ սուրբ Կարապետի
եւ Աթանազիոսայ նշխարաց տօն
հաստատեց, նսեւ ձեռնադրեց
քահանաներ, վերադարձին մկրտեց
Եփրատի մէջ Տրդատին, Աշխէն
տիկնոջ, Խոսրովեղիտին, բոլոր
գօրաց եւ բազմաթիւ ժողովրդոց,
գալով Վաղարշատ՝ Էջմիածնի
տաճարը հիմնարկեց, ձեռնադրեց
եպիսկոպոսներ, բացեց դպրոցներ
հայ մանուկների համար, շինեց
վանքեր կրօնաւորաց՝ եւ այս աս-
մէն գործերի մէջ միշտ կաջակե-
ցէր Տրդատ սուրբ Գրիգորին:

Ս. Գրիգոր երեք հարիւր քսան
եւ հինգ թ. ուղարկեց իւր Արեւ-
տակէս փոքր որդին Նիկիոյ ժողո-
վին ներկայ լինելու, որ Նիկիա-

կան հանգանակը Հայաստան բե-
րաւ: Այսպէս քրիստոնէական
հաւատը տարածելէն եւ եկեղե-
ցին բարեկարգելէն յետոյ, հայ-
բազետական գահը իւր Արիտա-
կէս որդուն թողլով, առանձնա-
ցաւ Գարանաղեայ Սեպուհ լերան
Մանեայ այրը, երեք հարիւր երե-
սուն եւ մէկ թուին, եւ վախճա-
նեցաւ անյայտ ի մարդկանէ:

7 Կելբակէ Բ. զինն Հոգ.

ՏՅՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ Էջ-
ՄԻՍԾՆԻ:

Տրդատայ եւ նորա պալատա-
կանայ հարուածը հռչակուած էր
Հայաստան աշխարհի ամեն կող-
մեր, աւելի եւս շուտ տարա-
ժուեց սուրբ Գրիգորի Վիրա-
պէն կենդանի դուրս գալու համ

բաւը՝ մանաւանդ որ հարուածեալները իրանց կատարութենէն կամնքուէին նորա ոտքերուն տակ: Ամեն կողմից նախարարներ, իշխաններ, ազատներ, զօրավարներ եւ խուռն բազմութիւն կը գային որ այս անհաւատալի համբաւները ստուգեն:

Հայաստան ժողովրդեան մեծ բազմութիւն հաւաքուած էր Վաղարշապատի մէջ՝ երբ Ս. Էջմիածնի տեղը խաչի նշանը կանգնեց Ս. Գրիգոր եւ այն խաչին առջեւը աղօթելով բժշկեց Տրդատին եւ ուրիշ հարուածեալներին. նոյն աւուր յիշատակը տօնել սահմանեց յետոյ՝ Կաթողիկէ Էջմիածնի շինութեան ըմանն, որ կը կոչուի Նաշակատիք Կարոշրիկէ Էջմիածնի:

* *

14 Կիւրակէ Գ. զինի Հոգ:

* * *

20 Շք. ԳԻԻՏ ՆՇԽԱՐԱՅ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐՁԻՆ ՄԵՐՈՅ:

Ս. Գրիգոր մարդիկներէ անյայտ, անմարմին զուարթնոց նըման զՍտուած կը փառաբանէր իւր առանձնարանի մէջ, նոյն սահմաններում՝ արածեցնող հովիւները գտան նորան մի ծառի փորի մէջ կանգուն եւ վախճանած, եւ առանց ճանաչելոյ ամփոփեցին զնա Մանեայ այրի մէջ՝ որ սուրբ ձգնարանն էր:

Յետոյ ուրեմն տեսիլքով յայտնուեց Գառնիկ ձգնաւորին, որ բերելով թաղեց թորդան առանի եկեղեցւոյ մէջ, ապա Ներսէս Գ. շինող կաթողիկոս՝ Լուսաւորչի նշխարը՝ իւր յանուն զուարթնոց շինած եկեղեցին փոխադրելով:

դու ինը սեղանի տակ ամբողջոյ
խի մարմնոյ միւս մասը չորս սե-
նեքի տակ:

Այս եկեղեցին ըստ աւանդու-
թեան այն տեղումն է, ուր առաջին
անգամ Լուսաւորչին հանդիպեց
Տրդատ. եւ բժշկութիւն գտաւ:

Այս տօները հանդիսաւոր կեր-
պով կը տօնէ Հայաստանեայց Ս.
եկեղեցին: Եջմիածնայ միաբա-
նութիւնը՝ հանդիսապէս կը տօնէ
Երկուշաբթի օրը՝ Ս. Հռիփսէ-
մեանց տօնը յաման նորս շինած
վկայարանի մէջ. Երեքշաբթի՝
Գայիանեանց տօնը Ս. Գայիանեանց
վանքի մէջ. Հինգշաբթի՝ Ս.
Շողակաթի վանքում, ուր ամիո-
փուած է Ս. Աթանազիէն եպիս-
կոպոսի մասունքը. իսկ Ս. Լու-
սաւորչի տօնը՝ կը կատարուէր
զուարթնոց եկեղեցւոյ մէջ. որ
այժմ խանգարուած է. եւ կա-

տարւումէ Եջմիածնի մէջ Լուսա-
ւորչի յատուկ սեղանի վերայ. իսկ
Եջմիածնի տօնը՝ Եջմիածնի տա-
ճարի մէջ:

21 Կեւրակէ Գ. զկնի Հոգ:

25 ԵՃ՝ ՅՕՆ ՍԲԲՈՅ ԹԱՐԳՄԱՆ-
ՉԱՅՆ ՄԵՐՈՅ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ
ՄԵՍԲՈՎ.ՊԱՅ.

Ս. Սահակ հայրապետ՝ մեծն
Ներսիսի որդին. արգի հաւանու-
թեամբ հայրապետական գահը
բարձրանալով կարգ եւ կանոն
հաստատեց. եկեղեցիքը սլայծա-
ւացուց եւ բազմաթիւ եկեղեցեաց
եւ վանօրէից շինութիւններ արաւ:
Երբ Ս. Մեսրոպը ճարտեցին
յայտնեց իւր մկարը Հայոց նշա-

214
նապերը հնարելու մասին՝ օժանդակեց նորան, թէ գրոց գիւտին եւ թէ սուրբ գրոց թարգմանութեան, բանալով դպրոցներ՝ Հայաստանը ծաղկեցուց հայերէն դպրութեամբ՝ օժանդակութեամբ Վառձապուհ թագաւորին, ուստի եւ կոչուեցան թարգմանիչք սուրբ գրոց:

28 ԿԵՐՈՒԷ Ե՝ ՎԼՆԻ ՀՈՒ:
ԳԻԻՏ ՏՓՈՅ Ս՝ԱՍՏՈՒՍՎԱԾՆԻ՝

ՅԱՒԻՆ:

5 ԿԵՐ՝ 9, ՎԼՆԻ ՀՈՒ:

12 ԿԵՐ՝ ՎԱՐԳՍՎԱՌ՝

ՅԻՍՏԱ ՊԵՐՈՍԻՆ, ՅԱԿՈՎԵՐՍԻՆ
ԵՒ ՆՈՐԱ ԵՂԵԱՅՐ ՅՈՒՏԱՆՆԵՍԻՆ

Թախօր լերան վերայ հանեց՝ այլակերպեցաւ նոցա առաջ (դէմքը արեւի եւ հանդերձը լուսոյ նման լուսաւորեցան) եւ այս միջոց Մովսէս եւ Կըլիան եկած կը խօսէին իրեն հետ:

Պետրոս զարմացած այս փառաւորութեան վերայ, ասաց՝ լաւ է մեզ աստ լինել, երեք տաղաւար շինենք, մին Քեզ, մին Մովսիսի եւ միւսն Կըլիայի, եւ մինչ կը խօսէր մի լուսաւոր ամնչ հովանի եղաւ նոցա վերայ, եւ Հօր Աստուծոյ ձայնը լսեցին՝ որ կասէր, դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ դու շուարոշք, առաքեալները սարսափած դետին ընկան: Յիսուս մօտենալով քաջալերեց, կանգնեցուց եւ պատուիրեց՝ որ այս անցքը իւր յարութիւնից առաջ չքարոզեն:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ-

աստանեայցս եկեղեցին հաստա-
տելէն յետոյ սահմանեց, որ Վը-
րիտտոսի Աստուծոյ այլակերպու-
թեան տօնը կատարեն Վարդա-
վառի տօնին փոխանակ, զոր ի
հնումն հեթ անասերը կը տօնէին
յանուն Ափրդիտէս կուսին. ծաղ-
կեալ վարդի նմանեցնելով նորան,
եւ յանուն նորա ծաղիկներով տօն
կը կատարէին:

13 ԲԸ՝ ՅԻՃԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ՝

18 ՇԲ՝ ՄԲԲՈՅՆ ԹԱԳԷՈՍԻ Ա-
ՌԱԲԵԼՈՅՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՍԱՆ-
ԳԽՏՈՅ ԿՈՒՍԻՆ՝

Թաղէսու առաքեալ Յիսուսի համ-
բարձուսից յետոյ՝ եկաւ Եգեսիա
քաղաքը. բժշկեց Աբգար թագա-

նէրին. քաթուկյ աւետարանը: Եւ
մկրտեց Աբգարի հետ եւ Եգեսիոյ
քնակիչները, կործանեց կառուու-
ները եւ կանոնեց եկեղեցիք. ա-
պա Աբգար թագաւորի խոյրարար
Աղգէին՝ եպիսկոպոս ձեռնադրե-
լով Եգեսիոյ եկեղեցւոյ վերայ,
գնաց Շուարշան, Սեւեթ, Ա-
ղուանք: Եւ Կեսարիա քարոզելու:

Շուարշանի մէջ մկրտեց Աբ-
գարի քեռորդի Կանատրուկին եւ
շատերին. իւր Զաքարեա աշա-
կերալը եպիսկոպոս ձեռնադրելով
թողուց այն տեղ. իսկ ինքը շրջեց
Հայաստանի զանազան կողմերը
աւետարանի քարոզութեամբ: Կե-
սարիայում հաստատեց եկեղեցի
եւ իւր Թէոփիլոս աշակերտին նո-
ցա վերայ եպիսկոպոս ձեռնադը-
րեց:

Սամատրուկ Աբգարի մահէն
յետոյ կրկին ընդունելով հեթանո-

224

սութիւնը, հալածանք հանեց ըը-
րիստոնեաների դէմ, նահատա-
կեց Արտագում քառասուն եւ
ութ Թուին Թաղէոս առաքելոյն
եւ իւր դուստր Սանդուխտին, ո-
րոց մարմինները ամփոփեցան Նա-
ւարշան դաւառի Սանատրուկ կո-
չուած դաշտի մի բլրակի վերայ:

19 կիր. Բ. զկնի Վարդավառի

26 կիր. Գ. զկնի Վարդավառի

Ոգոսոսոս:

2 կիր. Գ. զկնի Վարդավառի

9 կիր. Ե. զկնի Վարդավառի

16 կիր. ՎերԱփՈեՌՈՒՄՆ ՍՈՒՐՔ
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Սուրբ կոյս Մարիամ Աստուա-
ծածին որ Յիսուսի խաչելու թիւ-
նից յետոյ Յովհաննէս աւետա-
րանչի որդեական խնամոց տակ
կը մնար, իւր փոխումը զգալով՝
աուաւ իւր հրածեշտի ողջոյնը
առաքելոց եւ հաւատացելոց, եւ
հոգին իւր միածին որդւոյ ձեռ-
քը աւանդեց:

Առաքեալները տիրամեր մար-
մինը պատելով մեծ հանդիսու-
թաղեցին Վեթեմանի գիւղում:
Բարդուղիմէոս առաքեալը՝ Թաղ-
ման հանդիսին ջհամներով առա-
քելոց հետ գնաց գերեզմանը, եւ
ներս մտնելով չգտան տիրամեր
մարմինը, որովհետեւ ննջման եր-
րորդ օրը վերափոխուած էր հը-
րեշտակաց փառաբանութեամբ:

* * *

17

ԲԶ ՅԻՇԱՍԱԿ ՄԵՌՆԵՆՈՅ՝

23

ԿԻՐ Ր՝ ՕՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ՝

30

ԿԻՐ Գ՝ ՂԼՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ՝

ԳԻԻՏ ԳՕՏԻՈՅ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱՆՈՒՆՆԵՐ՝

ԱԷՅԿԻՏԷՆՆԵՐ՝

6

ԿԻՐ Գ՝ ՂԼՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ՝

8

ԳԶ՝ ՏՕՆ ԾՆՆԳԵԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱՆՈՒՆՆԵՐ Ի ՅԱՆՆԱՅԷ՝

Քրիստոսի Աստուծոյ մարդկազրութեան եւ անօրէնութեան օտներից երկրորդն է այս զոր կը

տօնէ քրիստոնէական սուրբ եկեղեցին:

Մարդկային փրկութեան վերաբերեալ անօրէնութիւնները յայտնի էին Աստուծոյ կանուխ դիտութեանը, ինչպէս Յովհաննէս Արկըրաչի յղութիւնը եւ ճնունդը յայտնեց Աստուած. նոյնպէս եւ Մարիամ կուսի ճնունդը եւ յղութիւնը յայտնեց, յորմէ պիտի ծննանէր ինքն փրկիչն մեր: Այս յայտնութիւնը թէպէտ եւ աւետարանչաց պատմական դրուաններում չաւնեմք, բայց աւանդութեամբ այսպէս ունի եկեղեցին:

13

ԿԻՐ ԽԱԶՎԵՐԱՅ՝

Քրիստոսի սուրբ խաչը տարին մի անգամ Երուսաղէմի պատրէարքը ի պէս ժողովրդոց բարձրա՛յ:

ցնելով հանգիսիւ կորհնէր ժո-
ղովուրդը: Վեց հարիւր քսան
երկու թուին Պարսից կտորով
թագաւորը գերի տարաւ Երու-
սողէմից սուրբ խաչը: Երբ վեց
հարիւր քսան ինն թուին վերա-
դարձուցին եւ դրին Երուսողէմի
տաճարի մէջ, սկն ժամանակից
սահմանեցին Խաչվերաց տօնը:

14 ԲԶ: ՅԻՇՍ.ՏԱԿ ԽԵՌԵԼՈՅ:

20 ԿԻՐ. Բ. ՂԿՆԻ Ս. ԽԱՅԻ:

27 ԿԻՐ. Գ. ՂԿՆԻ Ս. ԽԱՅԻ:

ՏՕԿ ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉԻ:

Երբ երեք հարիւր թուին սուրբ
Հռիփսիմեանք փախտուական Ղը-
ռովմից Հայաստան կըգալին, սուրբ

Հռիփսիմէ իւր պարանոցը կրած:
կենաց փայտի մասը երկիւղից
ծածկեց լերան գագաթի վերայ.
այս սուրբ խաչը վեց հարիւր յի-
սուս երեք թուին լերան վերայ
երեւեցաւ Թադիկ ճգնաւորին
լուսեղէն նմանաւթեամբ, որի հա-
մար տօն սահմանեց Երեսէս Գ.
կաթուղիկոս Հայոց:

Հակոբէ՛՛՛՛՛՛՛:

4 ԿԻՐ. Գ. ՂԿՆԻ Ս. ԽԱՅԻ:

11 ԿԻՐ. Ե. ՂԿՆԻ Ս. ԽԱՅԻ:

18 ԿԻՐ. Զ. ՂԿՆԻ Ս. ԽԱՅԻ:

ԳԻՒՏ ԽԱՉ:

Յուզա Պաղեստինացին ազգաւ
Տրէայ՝ որ նշանաւոր էր իւր ա-
ռաքինութեամբ եւ պատմական
հմտութեամբ: Խաչափայտի խու-
ղարկութեան ժամանակ իբրեւ
տեղեակ հնութեան ներկայացաւ
Հեղինէ դշխուհւոյն Տրէից կողմից
եւ յայտնեց Քրիստոսի խաչափայ-
տի տեղը:

Երբ խաչափայտը գտնուեց, հա-
ւատաց իւր Աննա մօր հետ ի
Քրիստոս, մկրտուեց, կոչուելով
Կիւրեղ: Ճեռնադրուեց եղիսիր-
պոս եւ նահատակուեց Յուլիա-
նոսի ժամանակ:

Յիսուսի երկինք համբուռնալէն
յետոյ՝ կենաց փայտը անփնամ
ձգած էր Գողգոթայի լերան վե-
րայ: Յակոբոս առաքեալ Տեառն

եղբայր՝ խաչը իւր մեռը առաւ,
բայց հրէայք յափշտակելով տա-
րան ծածկեցին գեղեցիկ կոչուած
տաճարի դրան մօտ, որ մեծամեծ
սրանջելիքներ կը գործէր, ապա
սյդ տեղից հանելով՝ դրին մի
գերեզմանի մէջ եւ քարէ կափա-
րիչով փակեցին, եւ կանգնեցին
գերեզմանի վերայ Ափրոդիտէսի
պատկերը եւ հրատարակեցին ժո-
ղովրդոց մէջ, որ սյդ սրանջելի-
քը սրատկերին է եւ սչ Քրիստոսի
խաչին:

Այս միջոց Կլոդիոս կայսեր
Պատրոնիկէ կինը Հռովմէն կրու-
տաղէմ դառով՝ կենաց փայտի
մասը Յակովբոս առաքեալէն կը
տոանայ եւ կը դաւանայ ի Հլովմ:
Կլոդիոս կայսեր մահից յետոյ
կը նստի Ներոն, սորա օրով Յա-
կովբոս առաքեալը կը նահատա-
կուի, եւ հրէայք կամենալով ան-

279

Հետացնել խաչք. կը հանեն գե-
րեղմանից եւ կը թաղեն Գողգո-
թայի լեռան վերայ. որ կը մնայ
անկայտուժեան մէջ՝ մինչեւ կոս-
տանդիանոսի թագաւորէլը. եւ
այս ժամանակ Հեղինէ թագուհին
Երուսաղէմ կերթայ եւ կը սկսի
խաչափայտը որոնել. զոր եւ կը
գտնէ Յուդա Պաղեստինացւոյ
ձեռօր:

* *

Նոյն Տէր:

1 Կիր. Բ. զկնի Ս. Խաչի:

* *

7 Շք. 80Ն. ՀՐԵՇՏԱ. ԿԱ. ՊԵՏՈՅՆ.
ԳՍ. ԲՐԻԷԼԻ. ԵՒ ՄԻՔԱՅԷԼԻ:

* *

8 Կիր. Թ. զկնի Ս. Խաչի:

* *

15 Կիր. Ժ. զկնի Ս. Խաչի:

* *

21 Շք. ԸՆԾԱՅՈՒՄՆ. ՍՐԲՈՅ
ԱՍՏՈՒԱԹԱՆՆԵ Ի ՏԱՃԱՐՆ:

Ըստ աւանդութեան սուրբ Աս-
տուածածնայ ծնողք Յովակիմ եւ
Աննա միշտ կաղօթէին Աստու-
ծոյ, որ իրենց մի որդի պարգեւէ:
Աստուծոյ հրեշտակը երեւնալով
Աննային որդեծնութեան տեսիլք
տուաւ: Աննան ուխտեց իւր զա-
ւակը Աստուծոյ տաճարին ընծա-
յել. եւ երբ ծնուաւ Մարիամ
դուստրը. տարաւ յանձնեց տա-
ճարի կրտանոց. որ տանն եւ չորս
տարեկան հասակում խօսեցաւ
Յովակիին. եւ տանն եւ հինգ
տարեկան հասակում ծնեց աշ-
խարհի փրկիչը:

* *

22 ԿԻՐ. Ա. ՅԻՄՆԱԿԻ.

28 ՆԷ. ՍՐԲՈՑ ԱՌ.Ս.ՔԵԼՈՑՆ ԵՒ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱՅՆ ՄԵՐՈՑ ԹԱ-

ԴԵՅՈՒ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՅՈՒ:

Սուրբ Թադէոսէն յետոյ Հայ-
աստան եկաւ սուրբ Բարդուղի-
մէոս առաքեալն, քարոզեց Մա-
րոց, Պարսից, Հնդկաց, եւ Հայոց,
կործանեց մեհեմաները. եւ նոցա
տեղը եկեղեցիք կանգնեց: Հէր
եւ Զարեալն դաւառներում քա-
րոզելէն յետոյ սնցաւ Անձեւացեաց
կողմերը. կործանեց յամուռն Անաշ-
տայ շինած արձանը եւ կանգնեց
Քրիստոսի սուրբ խաչը: Տեղբիս
դեպի աիին շինեց վարդիկ սա-
ճար եւ սուրբ Աստուածածնայ
պատկերը գնեցով նորա մէջ յանձ-
նեց կուսանաց, իսկ ինքն ի Հոյս

Քարոզելու միջոց նախատակուեց
Սանատրուկից վաթսուն եւ չորս
թուին Աւրբանուս քաղաքում:

* *

29 ԿԻՐ. Բ. ՂԸՆԻ ՅԻՄՆԱԿԻ:

* *

ՂԵԿՊԷՏԷՐ:

6 ԿԵՂ. Գ. ՂԸՆԻ ՅԻՄՆԱԿԻ:

* *

9 ԳԷ. ՅԳՈՒԹԻԻՆ ՍՐԲՈՑ ԱՍ-
ՏՈՒ ԱԾԱԾՆԵՒ:

* *

13 ԿԻՐ. Գ. ՂԸՆԻ ՅԻՄՆԱԿԻ:

* *

20 ԿԻՐ. Ե. ՂԸՆԻ ՅԻՄՆԱԿԻ:


* *

27 ԿԻՐ. Զ. ՂԸՆԻ ՅԻՄՆԱԿԻ:

* *

132

134



ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ.

5419

2013

« Ազգային գրադարան



NL0032622

[Handwritten signature]

